

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Պ. Ե. ՇԱՐԱՐԿԱՆՅԱՆ

Վերջին մոտ երկու տարվա ընթացքում բանավեճ է գնում հայերենի ուղղագրության մասին: Մի քանի մարդիկ պահանջում են Հայաստանում հրաժարվել նոր ուղղագրությունից և վերադառնալ հին, որ գործել է մինչև 1922 թ. և այժմ էլ դործում է սփյուռքի մեծ մասում: Հին վերադառնալու կողմնակիցներն իրենց այդ պահանջը հիմնավորելու համար առաջ են քաշում դանտղան պատճառաբանություններ, որոնց մեջ հիմնականն այն է, որ Հայաստանի և սփյուռքի հայության միջև ուղղագրության միասնություն է անհրաժեշտ: Եթե ի նկատի ունենանք, որ միասնության կարելի է հասնել նաև այն դեպքում, եթե սփյուռքի մեծ մասում՝ այնտեղ, որտեղ դեռ հին ուղղագրությամբ են գրում, հետևեն նորին, ապա հին վերադառնալու պատճառաբանություններն ոչ մի տրամաբանական բան չի մնա: Եմ իսկալես, ինչպես ներքևում կտեսնենք, միասնության հասնելու ռնական ճանապարհն այն է, որ սփյուռքում հետևեն նոր ուղղագրությանը: Մնացած հարցերը, որ առաջ են բաշում հին կողմնակիցները, չեն շոշափում խնդրի բուն էությունը և նպատակ ունեն մոլորեցնելու ընթերցողներին: Հին ուղղագրությունը պաշտպանում են հիմնականում այնպիսի մարդիկ, որոնք հեռու են կանգնած լեզվաբանությունից և չգիտեն այդ ուղղագրությունը: Ինչ ասես, որ չեն ասում և գրում գանազան հավաքներում, ժողովներում, հեռուստատեսությամբ և մամուլում: Ասում են, օրինակ, թե իբր լեզուն չի դարգանում, առանց հասկանալու, որ լեզվի վարգացումը նշանակում է նրա փոփոխություն: Գրում են, թե իբր նոր ուղղագրությունը խոչընդոտ է հարուցում «համակարգիչները հայադնելու ճանապարհին»¹: Հարս ենք տալիս: հասարակ գրամեքենայով կարելի է մեքենագրել թե՛ հին և թե՛ նոր ուղղագրությամբ բնագրեր, թե՛ գրարար, թե՛ աշխարհարար, թե՛ միջին հայերեն, թե՛ բարբառային, թե՛ ճիշտ, թե՛ սխալ և այլն: Այդ ի՞նչ համակարգիչ (կոմպյուտեր) է, որ հասարակ դրամեքենայի այս գործողությունները չի կարողանում կատարել, այլ հատուկ համակրանքով կառչած է մնում հին ուղղագրությանը: Հին ուղղագրության դժվար լինելը, ինչպես կտեսնենք, նույնիսկ արժանիք են համարում և արհամարհանքով են խոսում հարցի մանկավարժական կողմի՝ նոր ուղղագրության հեշտ, պարզ ու մատչելի լինելու մասին: Չեն խորշում բամբասանքնեղ տառածելուց և դրում են, թե իբր նոր ուղղագրության պաշտպանները «արհամարհական արտահայտություններ են թույլ տալիս սփյուռքահայության հասցեին»²: Չեն խորշում նաև հայհոյանքի հասնող անարգական արտահայտություններ հրապարակ հանելուց (տե՛ս ներքևում):

Մինչդեռ ուղղագրության մասին իրենց խոսքը հիմնավոր դարձնելու համար նրանք պետք է պարզեն մի շատ պարզ և հասարակ բան: Նրանք պետք է բացատրեն, եթե կարող են, որ, դիպք, հին ուղղագրությամբ յայտնի և հազ բառերի առաջին հնչյունները՝ յ և ճ տառերի հնչյունները, արդի հայերենում արտասանությամբ իրարից տարբեր են, որպեսզի կարողա-

¹ «Հայրենիքի» ձայն, 1989, № 43:

² նույն տեղում:

նան ասել, որ դրանք պետք է շարունակել գրել տարբեր տառերով: Այս պիտի բացատրեն, որ յայտնի բառի երկու յ տառերն էլ նույն արտասանությամբ ունեն արդի լեզվում, որ իրավունք ունենան ասելու, թե դրանք պետք է շարունակել գրել հին ձևով՝ նույն տառով: Այսպիսի հնչյունական փաստարկներ պիտի բերեն նրանք, որովհետև ուղղագրական բարեփոխությունն այդ հիմունքով է կատարվել:

Բայց հնչյունաբանորեն իրենց պահանջը չհիմնավորելով հանդերձ հնի կողմնակիցները հասել են այն բանին, որ արդեն հին ուղղագրությամբ ուսնձին հրապարակումներ են լինում, մամուլում առանձին հոդվածներ և այլ նյութեր են տպագրվում, և նույնիսկ թերթ է հրատարակվում: Կարծես ինքի էր ուղղագրական երկփեղկումը Հայաստանի և սփյուռքի միջև, հիմա էլ այդ երկփեղկումը տարածում են բոլոր Հայաստանի մեջ:

Որ ուղղագրության դեմ ուղղված այս խաչակրաց արշավանքի մեջ կեղծ, սովեստական մեթոդներով հնի կողմնակիցները պատրաստ են էլ ավելի առաջ գնալ և հայոց լեզուն քաշել այնպիսի արկածախնդրությունների մեջ, որոնք խիստ բացասական հետևանքներ կունենան: Այս սլոյմաներում չեզոքաբանությունը պետք է մանրամասնորեն բացատրեն և ցույց տան, թե ինչ է ներկայացնում իրենից աշխարհաբարի հին և այժմ սփյուռքի մեծ մասում գործող ուղղագրությունը, ինչ հարցեր են առաջ բաշում այն վերականգնել տահանադիտոր և ինչ մեթոդներ են գործող որով իրենց պահանջն իրագործելու համար: Ելնելով այս հանգամանքից՝ ես աշխատել եմ այս հոդվածի մեջ վերլուծելու ու քննելու ի. Լիսսնյանի «Վերադարձն ուղղագրական բնագրատումը» հոդվածի մեջ առաջ քաշված հարցերը: Դա քննության առարկան հոդված ի՞նչ ուղղված նույն թերթի 1989 թ. № 47-ում տպված ի. Մալիբեյի ուղղագրությունը՝ հոդվածի դեմ: Դրա մեջ հեղինակն ամփոփել է գրեթե բոլոր այն հարցերը, որ ինքի և հնի մյուս կողմնակիցները առաջ են քաշում հին ուղղագրությանը վերադառնալու իրենց պահանջը հիմնավորելու համար:

1. Հարցի պատմությունը

Ով որ ծանոթ է հայերենի ուղղագրության պատմությանը և հետևել է XIX դարի հրատարակություններին, նա գիտե, թե ինչ խորոգուրդ ճանապարհներով և ելեկշումներով է անցել աշխարհաբարի ուղղագրությունը: Դա շատ ընդարձակ նյութ է, և բոլոր համար առանձին ուսումնասիրություն է պետք: Ուղղագրության անցած այդ ճանապարհներին ընթերցողները կարող են ծանոթանալ լեզուաբանական ուսումնասիրությունների մեջ³, այստեղ բերում են միայն մի քանի հիմնական տեղեկություններ ի գիտություն ընթերցողներին:

Դախ առտո է նշել, որ բունոսի մեծ մասի գրության ձևը մեր լեզվի գրավոր հնագույն շրջանից մինչև մեր օրերը չի փոխվել: Այդպես են, օրինակ, հագ, ցուր, տուն, ագգ, քաղաք, փողոց, բանակ, բանբար, բծիշկ, աշտարակ, ռաշտ և այլն, բառաձևերից՝ գեամ, գեաս, գեան, գեացի, հացի, ագգի և այլն: Իսկ բառերի ու բառաձևերի այն մասը, որի գրության ձևը փոխվել է աշխարհաբարում, փոխվել է այդ բառերի պատմականորեն հնչյունափոխված լինելու հետևանքով, ընդ որում ոչ միայն 1922 թ., այլև դրանից առաջ, XIX դարում: Հնչյունափոխված բառերի գրության փոփոխությունը XIX դարում կատարվել է ոչ հետևողականորեն և ոչ միօրինակ ձևով:

³ «Ավանգարդ», 1989, № 84:

⁴ Տե՛ս հատկապես հետևյալ աշխատությունները. Լ. Ե. Պատմական տեսություն հայերեն ուղղագրական գրությունների.—Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի ուղղագրության և տառերի ձևափոխության հանձնաժողովի. Երևան, 1927: Զ. Ա. Տահյան. Հայոց լեզվի պատմություն. 2-րդ մաս, Երևան, 1951: Ս. Գյուլբուրդյան. Հայերենի ուղղագրության պատմություն. Երևան, 1973:

1. Երբ բառի միջից մի հնչյուն է ընկել, գրության մեջ համապատասխան տառը որոշ դեպքերում բաց են թողել, որպեսզի գրությունը համապատասխան լինի կենդանի արտասանությանը, իսկ ուրիշ դեպքերում թողել են հին ձևով: Օրինակ, բայական ձևերից՝ գնայր, գնայք, հեռացալ և այլն հնչյունափոխվել են, դրանց յ-ն արտասանությունից դուրս է ընկել, ուստի գրության մեջ էլ այդ յ-ն չեն գրել՝ գնար, գնաք. հեռացաք: Այլ, ոչ վերջացած բառերի վերջին յ-ն նույնպես դուրս է ընկել, բայց եզակի թվում դրանց յ-ն գրում են, ինչպես առաջ՝ վկայ, երեկոյ, մինչդեռ հոգնակի թվում, ինչպես և հոգնակից առաջ բաց են թողնում՝ վկաներ, երեկոներ, վկան և այլն: Նմանապես (ք)ն-ով վերջացած բառերի այս (ք)ն մասը արտասանությունից դուրս է ընկել, և գրության մեջ էլ չեն պահում՝ աղեղն, գագաթն, սկիզբն, երդումն և այլն հարձել են աղեղ, գագաթ, սկիզբ. երդում և այդպես էլ գրում են:

2. Եթե բառի մեջ պատմականորեն որևէ հնչյուն է ավելացել, ապա գրում են համապատասխան տառը, ինչպես՝ մեք-մեքն, հեռացաք-հեռացանք և այլն:

3. Եթե մի հնչյուն կամ երկարբառ փոխվել է մի ուրիշ հնչյունի, որոշ դեպքերում գրում են փոխված հնչյունին համապատասխան ձևով, իսկ ուրիշ դեպքերում թողնում են գրության հին ձևը: Օրինակ, բայերի ըզձականի (դրարարում սահմանական) հոգնակի 1-ին դեմքի մ հնչյունը պատմականորեն փոխվել վերածվել է ն-ի, դրան համապատասխան էլ գրարարի գրեմք, գնամք ձևերի տեղ աշխարհաբարում գրում են գրեքն, գնանք: Բայց նույն ձևով փոխվել է նաև բառասկզբի յ հնչյունը՝ լեռածմելում հ-ի, մինչդեռ այս դեպքում թողնում են գրության հին ձևը՝ յալտնի, յաղթել և այլն: Ծա երկարբառը մեծ մասամբ փոխվել է ե կամ ա պարզ ձայնավորի, և այդպես էլ գրում են՝ ցորեն, կորեկ, տեսել եմ, փախար, փախալ և այլն, փոխանակ հին ձևով գրելու՝ ցորեան, կորեակ, տեսեալ եմ, փախեար, փախեալ:

Այսպես, տեսնում ենք հակասություններ աշխարհաբարի ուղղագրության մեջ. հնչյունափոխված բառերի մի մասը գրվում է փոխված հնչյուններին համապատասխան տառերով, իսկ մյուս մասի գրությունը թողնվում է հինը: Իրա պատճառն այն է, որ աշխարհաբարի ուղղագրությունը հիմնված է ևղև գրարարի XIX դարի գրության և արտասանության վրա: XIX դարի կեսերին դպրոցներում մայրենի լեզուն դեռևս դրաբարն էր: Գրաբար գրվածքները կարգալիս որոշ բառեր արտաբերում էին ոչ այնպես, ինչպես V դարում, այլ փոխված ձևով, թեև ուղղագրությունը միջնադարյան էր: Այն դեպքերում, երբ գրության հին ձևը հակասում էր կենդանի լեզվի բառերի արտասանությանը, ինչպես՝ մեք, գնամք, գնայր, աղեղն, կորեակ և այլն, դրանք գրում էին փոխված ձևով՝ մեքն, գնանք, գնար, աղեղ, կորեկ և այլն: Իսկ այն դեպքերում, երբ հին գրության ձևերի արտասանությունը չէր հակասում կենդանի լեզվի բառերի հնչյուններին, որանց գրությունը թողնում էին հին ձևով, ինչպես՝ յաղթել, վկայ, կեանք, մեծութիւն բառերն այսպես գրում և կարդում էին հաղթել, վկա, կյանք, մեծութիւն: Դրանք այդպես հին ձևով էին գրում, որովհետև գրաբարում էլ այդպես էր գրությունն ու արտասանությունը: Բայց հենց դրանից էլ առաջանում են հակասություններ, որովհետև հնչյունափոխված բառերը որոշ դեպքերում գրում են գրաբարից տարբեր ձևով, իսկ ուրիշ դեպքերում գրաբարի ձևով, բայց կարդում են փոխված արտասանությամբ: Առաջանում է միևնույն հնչյունը տարբեր տառերով գրելու և միևնույն տառը տարբեր հնչյուններով արտասանելու հանգամանքը, որը դժվարություն է ստեղծում դպրոցներում աշակերտներին գրագիտություն սովորեցնելիս, քանի որ նույնահնչուն տառերը շփոթվում են իրար հետ և սխալ դրությունների դուռ բացում: Այս պատճառով XIX դարում, հատկապես այդ դարի 50-ական թվականներից արժարժվում են աշխարհաբարի ուղղագրությունը կանոնավորելու, գրաբարի ազդեցությունից ազատելու, հակասությունները վերացնելու հարցերը:

Առանձնապես երկար է տևում և մեծ ծավալ է ստանում վ հնչող ու տա-
ռը և կամ վ տառով գրելու խնդիրը՝ գուարք-գուարք-գվարք, գտնուած-գտնուած-
գանված և այլն: Նման բառերի վ-ով գրության ձևեր գործածված կան շատ
վաղուց՝ միջնադարյան արձանագրությունների մեջ: Հին ու-ի տեղ վ կամ ւ
գործածում են նաև XIX դարի սկզբներում վենետիկի մխիթարյանները,
որոնք հետագայում հրաժարվում են դրանցից և անցնում հին ու-ով գրու-
թյան: XIX դարի երկրորդ կեսում վ-ով և ւ-ով գրության ձևերը վերականգ-
նում են արևելահայ գրողներն ու լեզվաբանները: Ղ. Աղայանը հաստատում
է ւ-ով գրությունը («Աղբյուր» ամսագրի 1988 թ. № 12-ում և 1889-ի № 5—
6-ում տպված մի հոդվածում), իսկ լեզվաբան Ս. Սարգսյանը՝ վ-ով գրու-
թյունը («Մուրճ» ամսագրի 1889-ի 5-րդ համարում տպած իր հոդվածում):
Թե՛ հյուսիսագրությունը (և տառի անունով) և թե՛ վե՛րագրությունը (վ տառի
անունով) ունենում են իրենց հետևողները, որոնք կիրառում են այդ տարբեր
գրության ձևերն իրենց հրատարակած գործերում:

1853 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Ուղղագրություն արդի հայ լեզվին»
գրքում (հեղինակի անունը չկա գրքի վրա, համաձայն «Արևելք» թերթի
1889 թ. դեկտեմբերի 5-ի համարի հեղինակները երեքն են՝ Ռուսինյան, Օտ-
յան, Թևկրյան) գործածված են ուղղագրական շատ նոր ձևեր՝ շեղումներ
գրաբարի ուղղագրությունից: Նշենք դրանցից մի քանիսը:

ա) -ութին ածանցի սեռականը հին -ութեան ձևի տեղ գրում են
-ութիան, գործիականը՝ -ութիամբ՝ զօրութիան, զօրութիամբ, զօրութիանց:
Այսպես նաև այլ դեպքերում՝ Արծուենիք-Արծուենիաց, լսելիք-լսելիաց (էջ 7):

բ) Հեղինակներն ընդունում են, որ միջնադարյան շատ գրողներ՝ օրի-
նակ՝ Ներսես Շնորհալին, ավելի տրամաբանական են վարվել և ւ տառի տեղ,
եթե այն արտասանվում է վ գրել են վ, և բերում են այսպիսի օրինակներ՝
զըվարք, նըվաստ, ավասիկ և այլն:

գ) Ընդունում են, որ իւ երկարբառի տեղ կարելի է գրել միայն ի՝ իւղ,
-ւղ, հիր-հւր, ալիր-ալւր, սւրին-սւրւն, զօրութին-զօրութւն և այլն:

դ) Գրաբարի այ, ոյ վերջացած բառերը, որոնց վերջին յ-ն չի արտա-
սանվում, ավելի տրամաբանական են համարում գրել առանց յ-ի, ուրեմն՝
արբայ, ծառայ, հաճոյ, պիտոյ և այլն գրել՝ արբա, ծառա, հաճո, պիտո,
նմանապես՝ կերթա, փոխանակ կերթայ ձևի (էջ 257):

ե) Շատ բառեր ու բառաձևեր, որոնք գրաբարյան ուղղագրությամբ գր-
վում են ե-ով, այս հեղինակները գրում են է-ով: Այսպես՝ էմ, էս, էն, գոր-
ծէմ, գործէս և այլն, գործէցի, գործէցիր, գործէց (էջ 35—36), գործվէլու,
գործվէլով և այլն (էջ 63): Նմանապես հոգնակերտ եր վերջավորությունը
գրում են է-ով՝ բառէր, բառէրու, բառէրով և այլն (էջ 6):

Այս գրքում առաջարկված ուղղագրական նորությունները շատ աղմուկ
հանեցին, և դրանց մեծ մասն ընդունելություն չգտավ:

«Հայկական աշխարհ» ամսագրի 1866 թ. 8-րդ և 9-րդ միացյալ հա-
մարում (խմբագիր խորեն Ստեփանե) հրատարակվում են այդ ամսագրի
լեզվի կանոնները, որոնց մեջ կան շատ նորություններ: Այսպես, ըստ այդ
կանոնների վ հնչյունն ամեն դեպքում պետք է գրել վ տառով՝ դժուար-դըժ-
վար, օգտաւէտ-օգտավէտ, չի հապանի-չի հավսնի, վեր թռաւ-վեր թռավ,
բաւական-բավական, լաւ-լավ և այլն: Բառասկզբի յ տառը, եթե ճ է արտա-
ւանվում, գրել ճ տառով՝ յստակ-ճստակ, յայտնի-ճայտնի, յիշել-ճիշել և
այլն, բառավերջի յ տառը բաց թողնել, եթե չի արտասանվում՝ առաւկայ-
առաւկա, կը ցաւկայ-կը ցաւկա, ստորեւերկեայ-ստորեւերկեա, շրջակայ-շրջա-
կա և այլն, բառավերջի ոյ կապակցության տեղ գրել օ՝ յետոյ-հետօ, երե-
կոյ-երեկօ և այլն:

Աշխարհաբարի ուղղագրությունը կանոնավորելու, միօրինակ դարձնելու,
կենդանի արտասանությանը մոտեցնելու ջանքերը շարունակվում են նաև
XX դարի առաջին երկու տասնամյակներում: Այդ խնդրի վերաբերյալ ժողով-
ներ են գումարվում, զեկուցումներ են կարդացվում: Այսպես, օրինակ, 1908 թ.

ապրիլի 17-ին Կովկասի դպրոցների ուսուցիչների միության վարչության հրավերով Ստ. Մալխասյանը դասախոսություն է կարդում վ. Զնյունի և նրա գրությունն մասին: Այդ զեկուցումն ավելի ուշ մտավ հեղինակի «Մի հնչյունին սի դիր» գրքույկի մեջ: Ժողովում խոսում են նաև ուրիշները՝ արտահայտելով տարրեր կարծիքներ: Արտահայտվողների մեջ է լինում նաև Վ. Աղսյանը: Ուրշվում է նոր ժողով գումարել ուղղագրական հարցերի վերաբերյալ:

1912 թ. հոկտեմբերի 14-ին հայերեն տառերի գյուտի 1500-ամյա և ուղղագրության 100-ամյա հոբելյանի առթիվ հոբելյանական հանձնաժողովի նախագահ Դավուստ Տեր-Մկրտչյանի առաջարկով Մանուկ Աբեղյանը մեծ շնորհակալություն է ցուցաբերում ուղղագրության բարեփոխման մասին: Այդ զեկուցումը տպագրվում է «Արարատ» ամսագրի նույն թվականի № 11, 12-ում: Զեկուցումից առաջ հանձնաժողովի հանձնարարությամբ Մ. Աբեղյանը մի հարցաթերթի է կազմում, որի մեջ հարց է տրվում՝ կարելի՞ է, թե՞ չի կարելի հայերենի ուղղագրության մեջ փոփոխություններ մտցնել, և առանձին կետերով հարցումներ են արվում, թե ինչու՞ չի կարելի, կամ ինչու՞ կարելի է փոփոխություններ մտցնել և ի՞նչ կարգի փոփոխություններ: Հարցաթերթիկը հոբելյանական հանձնաժողովի ստորագրությամբ հրապարակվում է «Արարատ» ամսագրի 1913 թ. հոստոս-սեպտեմբերի միացյալ համարում որպես հրապարակային նամակ հայ և օտարագրի հայս գետներին⁶:

Սակայն տեսական և մշակութային մի կենտրոնի բացակայության պատճառով հայերենի ուղղագրությունը կանոնադրելու համար թուփված ջանքերը արդյունք չեն տալիս, ուղղագրության մեր հիմնական բառերը, գրաբարի ազդեցությունից ազատելու և կենդանի սրտաստեղծությանը մոտեցնելու նպատակը չի իրագործվում: Հայոց լեզվի ուսուցիչ, երկարամյա մանկավարժ, «Մարտի» լեզու» դասագրքի հեղինակ Նիկողայոս Տեր-Ղևոնդյանը «Նոր դպրոց» ամսագրի 1909 թ. 5-րդ համարում գրում էր. «Մեզանում չարիքի արմատը նաև նրանումն է, որ ամեն մի խմբագրություն, կարծես, սուրբ պարտականություն է համարում հետևել այնպիսի ուսուցչության, որ շատ կամ սակավ տարբերվի մյուս պարբերական թերթերի ուղղագրությունից: Փոխվում է խմբագրությունը, փոխվում է և թերթի ուղղագրությունը»:

Վերջապես 1921 թ. հունվարին Հայաստանի Լուսավորչության հանձնարարությամբ Մ. Աբեղյանը կարդում է նոր զեկուցում ուղղագրության բարեփոխության մասին, որից հետո մտքերի փոխանակություն է լինում իր զեկուցման մեջ Մ. Աբեղյանն առաջարկում է ուղղագրության բարեփոխման մի քանի տարբերակներ: Լուսավորչության խորհուրդը 1922 թ. մարտի 4-ի զեկուցումով հաստատում է այդ զեկուցման մեջ արված բոլոր առաջարկությունները և գործադրության դնում:

Ուղղագրության բարեփոխման կետերի մեջ Մ. Աբեղյանը հաշմի էր առել նախորդ տասնամյակներում այդ խնդրի մասին եղած ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքները և այդ բնագավառում իսկ կուտակած հսկայական փորձով ներկայացրել էր բարեփոխության այնպիսի կետեր, որոնք յավագույնս համապատասխանում են ժամանակակից հայերենի ոգուն՝ ճիշտ ևն հնչյունաբանորեն, արդարացված են մանկավարժորեն և հայոց լեզվի պատմության տեսակետից: 1922 թ. օգոստոսի երկար ժամանակի ընթացքում նախապատրաստված և հաստատացած հարցի լուծումն է եղել, ուղղագրական բանավեճերի վերջին փուլը: Այդ օգոստոսի կետերի մեջ գրեթե չկա մեկը, որ նախորդ տասնամյակներին քննարկման նյութ եղած չլինի:

⁶ Թիֆլիս, 1910.

⁶ Տճ՝ «Նոր դպրոց», 1908, № 5.

⁷ Տճ՝ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 652—653.

Երբ 1924 թ. Ստ. Մալխասյանն իր «Լեզվային հարցեր» վերնագրով հոդվածում⁸ գրում է, թե ռեֆորմով հաստատված կետերից «երեքը (3, 4, 8) Մ. Աբեղյանին էլ չեն պատկանում, այլ առաջարկված ու գործադրված են եղել ուրիշներից», Մ. Աբեղյանը պատասխանելով նրան՝ գրում է. «Կարծես թե մեկն ասել է նրան, թե «Աբեղյանին են պատկանում...: Կարող եմ Ս. Մ.-ին (Ս. Մալխասյանին—Պ. Շ.) ապահովել և այն մասին, որ մյուս կետերի նկատմամբ էլ ոչ մի բան չկա, որ ուրիշներն էլ մտածած չլինեն և մասամբ նույնիսկ գործադրած: Ես միայն մի բան եմ արել, երբ ինձնից հարցրել են իմ կարծիքը ուղղագրության մասին, տվել և պաշտպանել եմ իմ պատճառաբանված զեկուցումը, որի մեջ առաջարկել եմ մի քանի բան փոխել մեր ուղղագրության մեջ»⁹:

Վերի շարադրանքից պարզ է դառնում հետևյալը.

1. Աշխարհարարի հին ուղղագրությունը, որ գործել է XIX դարում, XX դարի առաջին երկու տասնամյակներում և այժմ էլ գործում է սփյուռքի մեծ մասում, գրարարի ուղղագրությունը չէ, ինչպես ուզում են ներկայացնել հնի կողմնակիցները՝ որակելով այն «1500 տարվա, մաշտոցյան, դասական» և այլ բառերով, այլ գրաբարի ուղղագրությունից տարբերվում է մի շարք կետերով:

2. Աշխարհարարի հին ուղղագրությունը միօրինակ և կանոնավորված չի եղել, այլ շատ անկանոն, շատ անգամ միևնույն բառը տարբեր տեղերում և տարբեր հեղինակներ գրել են ոչ միանման, որից առաջացել են ուղղագրական անկանոն դրույթներ: Այս մասին էլ ոչինչ չեն ասում հնի կողմնակիցները:

3. Եվ ամենակարևորը տվյալ դեպքում. ուղղագրության բարեփոխության խնդիրը չի ծագել հանկարծակի 1922 թ., այլ դրանից շատ առաջ, նախապատրաստված է եղել նախորդ մի քանի տասնամյակների ընթացքում, քննարկվել է մշակութային շատ գործիչների կողմից: 1922 թ. բուն ռեֆորմը իրականում հարցի պատմության մեկ փուլն է միայն, վերջնական, ավարտուն փուլը:

Ուղղագրության բարեփոխման հարցի պատմությունը այստեղ շարադրվեց շատ համառոտ, հիմնական գծերով, սոսկ որպես ուրվագիծ, որպեսզի ընթերցողներն իմանան, որ այդ հարցն ունեցել է իր նախապատմությունը: Եթե այստեղ բերվեի աշխարհարարի ուղղագրությունը բարելավելու, կանոնավորելու հարցին նվիրված աշխատությունների ցանկը, ապա դա կկազմեր մի մեծ ցուցակ՝ բաղկացած մի քանի տասնյակ գրքերից ու հոդվածներից: Այդ ցուցակի մեջ կմտնեին բազմաթիվ լեզվաբանների, գրողների, խմբագիրների, ուսուցիչների և այլոց անուններ, որոնք առաջարկել են ինչ-ինչ փոփոխություններ մտցնել հայերենի ավանդական ուղղագրության մեջ և մասամբ կիրառել են դրանք իրենց գրածների մեջ՝ Ն. Ռուսինյան, Գ. Օտյան, Ղ. Աղայան, Խ. Ստեփանե, Ս. Սարգսյան, Գ. Բալասանյան, Ն. Ադոնց, Ս. Մալխասյան, Ն. Տեր-Ղևոնդյան, Ս. Մանգինյան, Մ. Նավասարդյան, Ա. Նազարեթյան, Լ. Մարկոսյան, Ա. Օհանջանյան, Ս. Թառայան և շատ ուրիշներ:

Ահա այն, ինչ ես ի նկատի եմ ունեցել և այժմ էլ ի նկատի ունեմ ուղղագրական ռեֆորմի հարցի պատմություն ասելով և նյութի այսչափ ընդարձակ լինելու պատճառով է, որ իմ հոդվածում գրել եմ. «Թերթի սուղ էջերը թույլ չեն տալիս գոնե համառոտ կերպով շարադրել հարցի պատմությունը»: Այս պարզ ասված խոսքը իշխանյան առանց այլևայլության շուտ է տվել, վերածել հակառակ իմաստին, գրելով՝ «խոստանում է գոնե համառոտ շարադրել հարցի պատմությունը, բայց ոչ մի խոսքով իրական պատմությունը նա չի ներկայացնում»: Եվ այս գրելուց հետո ինքը ներկայացնում է իր հասկացած «իրական պատմությունը», որը հանգում է միայն 1922 թ. բուն ռեֆորմի փաստին, Պ. Մակինցյանի՝ լատինական այբուբենին անցնելու մտադրությունը և մշակութային մի շարք գործիչների՝ այդ ռեֆորմի դեմ արտա-

⁸ «Մարտակոչ», 1924, № 10:

⁹ Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 386:

առաջնութեամբ Այդ կերպ վարվելով նա 1922 թ. ռեֆորմը մեկուսացնում, անշատում է հարցի պատմությունից, կտրում իր արմատներից և այնպես է դուրս բերում, թե իբրդ դա միանգամից, հանկարծակի եկած աղետ է եղել։ այդպես էլ պրոպ. է. «1922 թ. մարտի 4-ին հայոց լեզվի գլխին աղետ եկավ»։ Ինչու է, այդպես վարվում։ Շատ հասկանալի պատճառով։ Եթե նա գրեթե հարցի իրական պատմությունը, ընթերցողները կտեսնեին, որ ուղղագրության յարեւելիքի մասին հարցը նախապատրաստված է եղել 1922 թ. շատ տասնամյակներ առաջ, որ դա հասունացած և օրակարգի հարց է եղել, դրանով սերունդներ են զրազվել, որ դա մշակութային շատ գործիչների մտահոգության առարկան է եղել երկար ժամանակ և 1922 թ. միայն իր լուծումն է ստացել։ Այդ բնույթով նա չէր կարող դրել, թե «մի մարդու ուղղագրական կարծիքը արմատով փոխարինել է հայոց լեզվի, ուստի հայ ժողովրդի վզին»։ Մի մարդու կարծիքի դեմ կռվելն ավելի հեշտ է, քան շատերի, դրա համար էլ բաց է թողել հարցի պատմությունը։ Եվ դրանից հետո դեռ ինքն է գրում, թե «ի՞նչ կարիք կա այդ ամենը թաքցնելու այսօրվա ընթերցողից»։ Հիմա ո՞վ է թաքցնում և ի՞նչ է թաքցնում։

Հին ուղղագրությանը վերագրվող պահանջով ուզում են մեզ հետ տանել դեպի XIX դարի 50-ական թթ., որպեսզի կրկին անգամ վերարծարծվեն նույն այն հարցերը, որոնք արդեն քննության առարկա են եղել շուտ տասնամյակների ընթացքում և լուծվել են։

2. Ուղղագրության հարցի «մաքրումը» և կարևորը, Մակինցյանի գաղտնի մոտադրությունը և «հայերի մտավոր ընդունակությունները»

Ուղղագրական փոփոխությունները թե՛ միջնադարում, թե՛ XIX դարում և թե՛ 1922 թ. կատարվել են հնչյունական հիմունքներով՝ բառի մեջ փոխվել է նրա այս կամ այն հնչյունը, դրան համապատասխան փոխվել է տրվելով լատին գրության ձևը։ Ի նկատի ունենալով այս հանգամանքը՝ ես իմ հոդվածում դրել եմ, որ 1922 թ. ուղղագրական բարեփոխությունը արդարացված է ոչ միայն հնչյունաբանորեն ու մանկավարժորեն, այլև հայոց լեզվի պատմության տեսակետից։ Այդ ցույց տալու համար մի երկու օրինակ եմ բերել, խոսել եմ ձայնավորների, բաղաձայնների, կիսաձայնի, վանկերի և այլնի մասին, որպեսզի բացատրեմ բառերի մեջ այս կամ այն տառի դրության փոփոխության պատճառները։ Բայց իշխանյանն այս հարցերը «մանրութենք» և շեղում է համարում, դրելով, թե ես «բոլորովին այլ հարցերի մասին» եմ գրում, «ընթերցողի ուղղագրությունը շեղելով դեպի այնպիսի բաներ, ինչպես՝ գրեթե բառի մեջ հորանջի անհետացումը և կիսաձայն չ-ի մոտորը, փակ ու բաց վանկերի, վանկարար բաղադրիչների, վանկարար և ոչ վանկարար ձայնավորների մասին և այլն»։

Բայց ուղղագրության հարցն արծարծելիս էլ ինչի՞ մասին կարող է խոսք գնալ, եթե ոչ հենց այդ երևույթների։ Չէ՞ որ ուղղագրությունը հնչյունաբանության մի բաղադրիչ մասն է։ Ինչպե՞ս պատահեց, որ ուղղագրական ռեֆորմի խնդրում նման հնչյունական բացատրությունները մանրութենք և շեղումներ դուրս եկան։ Դարձյալ հասկանալի սխառնադրված։ Հին ուղղագրությանը վերագրվող պահանջը հնչյունաբանորեն չի հիմնավորվում, ուստի եթե մեկը խոսում է այդ հարցերի մասին, դա, հնի կողմնակիցների կարծիքով, շեղում է և մանրութի։

Ուղղագրական ռեֆորմի հարցում իշխանյանի համար ամենակարևորը հետևյալն է։ 1924 թ. «Заря Востока» թերթի նոյեմբերի 29-ի համարում Պ. Մակինցյանը տպագրում է մի հոդված, որի մեջ առաջարկում է հայերեն առերևույթ թողնել և ընդունել լատինական այբուբենը։ Նա գրում է. «Անձնապես ես ոչ մի դեպքում ձայն չէի տա ի նպաստ այդ ռեֆորմին, այլև չէի առաջարկի ժող. կոմ. խորհրդի քննության, եթե նրան չհամարեի մի աստիճան՝ դեպի լատինական դիրք անցնելու գործը դյուրացնելու համար», և շա-

ողունակում է այս ոգով¹⁰։ Ռ. Իշխանյանը Պ. Մակինցյանից բերելով մի մեծ քաղվածք, որի մեջ են և հիշյալ խոսքերը, եզրակացնում է. «Բերված քաղվածքից պարզ երևում է, որ արեղյանական ուղղադրության ընդունման մենմիակ նպատակը եղել է լատինատառ հայերենին անցնելը»։ Թե ինչպես է «պարզ երևում» մի բան, որ բոլորովին չի երևում, այդ միայն ինքը գիտե։

Այսպես ուրեմն, նպատակը Մակինցյանին է, բայց այդ մի մարդու նպատակը սուսուսուս դարձավ «արեղյանական ուղղադրության մենմիակ նպատակը»։ Ուղղադրական բարեփոխություն ընդունողը միայն Մակինցյանն էր, Վերջինս ձայն տվողներից մեկն էր միայն։ Ռեֆորմը հաստատվել է ժողովուրդի խորհրդով, որի կազմի մեջ եղել են շատ մարդիկ (11 մարդ, տե՛ս ներքևում)։ Մակինցյանի նպատակը հայտնի է եղել ժողովուրդի անդամներին, եթե հայտնի է եղել, նրանք կամ նրանցից մի քանիսը, կամ մեկը համամիտ են եղել Մակինցյանի մտադրությանը։ Այս հարցերի մասին ոչինչ չի գրում Իշխանյանը, բայց բարեբախտաբար պատասխանը հայտնի է։ Մակինցյանն իր գաղտնի մտադրության մասին գրել է 1924 թ. 1922 թ. ռեֆորմն ընդունողները Մակինցյանի խոստովանությունից երկու տարի առաջ որտեղից պիտի իմանային նրա գաղտնի մտադրությունը։ Այս հարցը շատ կարևոր է, ուստի այն պարզաբանելու համար մի քիչ ընդարձակ մեջբերում ենք անում Մ. Աբեղյանից։ Վերջինս իր «Ուղղադրության ռեֆորմը» աշխատության վերջում դրած հավելման մեջ գրում է. «Այս գիրքը վեց ամիս առաջ, 1924 թ. մայիսին արդեն պատրաստ էր և հունիսին տպագրության հանձնված, երբ Թիֆլիսի «Заря Востока» թերթի մեջ նույն թվի նոյեմբեր ամսի 29-ի համարում լույս տեսավ ընկ. Պ. Մակինցյանի մի հոդվածը, որի մեջ նա առաջարկում է թողնել սահակ-մեսրոպյան տառերը և գրել լատիններեն տառերով։ Այդ հոդվածի մեջ շոշափված է նաև ուղղադրության խնդիրը մի քանի հայտնություններով։

Ժամանակին լուսժողովում Պ. Մակինցյանը նոր ուղղադրության դեկրետի սկզբում գրել է. «Ժողովրդական լայն խավերի համար գրականության ուսումը հեշտացնելու, ընդհանուր կրթությունը բարձրացնելու և դպրոցն ուղղադրություն սովորելիս գործ դրած անպետք և ապարդյուն ժամավաճառությունից և աշխատանքից ազատելու նպատակը», իսկ այժմ նա հայտնում է, թե ինքն այն ժամանակ իսկապես մի ուրիշ գաղտնի նպատակ է ունեցել և թե ինքը «ոչ մի դեպքում ոչ միայն ձայն չէր տալ ռեֆորմի համար, այլև օրինազրկ չէր մտցնիլ կոմիսարների խորհուրդը, եթե ուղղադրության ռեֆորմը չհամարեր իբրև մի աստիճան, որ հեշտացնում է լատիններեն տառերին անցնելը»։

Այժմ է միայն հասկանալի դառնում, թե ինչու նա ուղղադրության ռեֆորմի խնդիրն ամբողջական ձևով ներկայացրեց կոմիսարների խորհրդին... Ես կարծում եմ, որ ավելի լավ կլիներ, եթե նախկին լուսժողովումն ուղղադրության դեկրետի սկզբում հենց այն գրած լիներ, ինչ որ ինքն իբրև գաղտնի նպատակ ունեցել է, այսինքն լատիններեն տառերին անցնելու նպատակը։ Այն ժամանակ ժողովրդական կոմիսարներից մեկը կամ մյուսը, գուցե և մեծամասնությունը ձայն չէր տալ ուղղադրության ռեֆորմին, և գուցե չէր լինիլ այն զվարճալի դրությունը, որի մեջ ընկած է Պ. Մակինցյանը...»¹¹։

Կարծում եմ շատ պարզ է, որ ռեֆորմն ընդունողների համար լատիններեն տառերին անցնելը ոչ միայն նպատակ չի եղել (բացի մի հոգուց՝ Մակինցյանից), այլև նրանք չեն էլ իմացել այդ մասին։ Ինչպե՞ս կարող էր նրանց համար իրենց չիմացած բանը նպատակ լինել։

Լատիններեն տառերին անցնելու միտքը մի ուրվական է, որ ծնվել է մի մարդու մեջ ու նրա հետ էլ չբացել։ Այդ ուրվականին է հարուստում տվել Ռ. Իշխանյանը ընթերցողներին վախեցնելու համար։

¹⁰ «Մարտակոչ», 1924, № 279 (այստեղ թարգմանաբար տպված է «Заря Востока» թերթում Պ. Մակինցյանի հրատարակած հոդվածը),

¹¹ Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 490—491,

Բայց նա ինքը շատ էլ չի հեռացել Գ. Մակինցյանից: Ուղղագրության դժվար կապ հեշտ լինելը նա կապում է տվյալ լեզվով խոսողների մտավոր ընդունակությունների հետ, ընդ որում դժվար ուղղագրություն ունենալու վայել է համարում բարձր մտավոր ընդունակություններ ունեցող ազգին: Ահա նրա գրածը. «Զիտեմ ինչու, նրանց կարծիքով անգլիացիներն ու ամերիկացիները կամ դուռներն ու ֆրանսիացիները կարող են դժվար և ավանդական ուղղագրություն ունենալ, իսկ հայերին գա վայել չէ: Ըստ երևույթին կարծում են, որ մեր՝ հայերիս մտավոր ընդունակություններն ավելի ռաձր են, և մեզ գրագետ դարձնելու համար պետք է հրամցենել ռաձարզեց-ված», ավանդականությունից զրկված ուղղագրություն¹²:

Ահա թե ինչ ենք իմանում: Զավե՞շտ է, թե լուրջ է ասված: Հիմա ո՞վ է ավելի հեռու գնացել օտար ազգերին կուրորեն նմանվելու ցանկության մեջ, Մակինցյանը, որ լատինական տառերին անցնելը չէր կապում հայերի մտավոր ընդունակությունների հետ, այլ կարծում էր, որ եթե Կովկասի բոլոր ժողովուրդներն ընդունեն լատինական այբուբենը, հնարավորություն կունենան «ոչ միայն խոսել իրար հետ դանազան լեզուներով, այլև կարգալ դա-նադան լեզուներով, ծանոթանալ գրականության...»¹³, թե՛ Իշխանյանը, որը կարծում է, թե դժվար ուղղագրություն ունենալը կապված է տվյալ ազգի մտավոր ընդունակությունների հետ, ուրեմն՝ ետ շմանք անգլիացիներից ու ֆրանսիացիներից:

Հիմա ենք իմանում, թե ինչու է պետք մեզ դժվար ուղղագրություն ունենալու: Ի՞նչ պետք է նրա համար, որ նոր ուղղագրության կողմնակիցները չկարողանան ասել, թե մեղ վայել չէ դժվար ուղղագրությունը և չունենան այն կարծիքը, թե հայերը մտավոր ընդունակությամբ թույլ են անգլիացիներից և այլ ազգերից:

Մեծերին, մեծ աղգերին նմանվելու ցանկությունն, իհարկե, պատմախոսական դրացում է: Երևի Իշխանյանն սպասում է, որ իր վերոհիշյալ տողերը կարդալով մարդիկ կաղղվեն, կլցվեն այդ զգացումով և կվազեն գրադարանները՝ դրքեր վերցնելու և հին ուղղագրության դասեր առնելու, որ ուրիշներին տեղիք չտան իրենց մտավոր ընդունակությունների վրա կասկածելու:

3. «1500 տարվա, մաշտոցյան, դասական ուղղագրություն» և ավստրոյից

Հին ուղղագրության կողմնակիցները հաճախ են գործածում «1500 տարվա, մաշտոցյան, դասական ուղղագրություն» բառերը, որը նրանց ասելով խախտվել է միայն 1922 թ.: Թեև ընդունում են, որ դրանից առաջ էլ ուղղագրական փոփոխություններ եղել են, բայց նրանց ասելով հնում ուղղագրական փոփոխությունները «մասնավոր բնույթ են ունեցել, մաշտոցյան ուղղագրական ամբողջական համակարգը չեն խախտել, պահպանել են, իսկ 1922-ին մերժվեց մաշտոցյան-դասական ուղղագրության հենց համակարգը»¹⁴: Բայց ինչու՞ հնում բառերի փոխված գրությունները չեն խախտել մաշտոցյան համակարգը, իսկ 1922-ին փոխվածները խախտել են: Ո՞րն է ուղղագրության համակարգի խախտվելու և չխախտվելու չափանիշը:

1922 թ. ռեֆորմն էլ կատարելապես հնչյունական չի դարձրել մեր ուղղագրությունը: Եթե մի կողմ թողնենք այն, որ չհնչյունափոխված բառերն առհասարակ մնացել են հին գրությամբ (չուր, տուն, քաղաք և այլն), և որոնք բառերի ճնշող մեծամասնությունն են կազմում, հնչյունափոխվածներից շատերի գրությունը ևս չի փոխվել, բաղաձայնների գրությունն առհասարակ

¹² «Ավանգարդ», 1989, № 94, Տե՛ս նաև «Գրական թերթ», 1989, № 31:

¹³ «Մարտակոչ», 1924, № 279:

¹⁴ «Ավանգարդ», 1989, № 84:

մնացել է հինը, բացի Վ-ից և բառասկզբի Յ-ից: Այլ կերպ չէր էլ կարող լինել. որովհետև այնպիսի մի լեզու, որ ունի հին գրականություն, չի կարող այնպես փոխել իր ուղղագրությունը, որ բառերի գրության հին պատկերներն ամբողջությամբ փոխվեն ու կտրվեն հնից և անճանաչելի դառնան: Այդպես չի եղել, և իզուր են պնդում հին ուղղագրության կողմնակիցները, ինչ 1922 թ. մեր լեզուն ամբողջովին կտրվեց բառերի գրության հին ձևից, լատիսովեց հին ուղղագրության համակարգը, «մնացին միայն նշանագրերը»¹⁵:

Հին դարերի ուղղագրության մասին մենք գիտենք միայն գրավոր աղբյուրներից: Հայերեն ձեռագրական աղբյուրներից հնագույնը 887 թ. գրված Ավետարանն է՝ Լազարյան ձեռարանի Ավետարանը, որ այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանի № 6200-ի տակ (կա դրա լուսատիպ նմանահանությունը՝ տպված Մոսկվայում 1899 թ.): Հայտնի են դրանից առաջ գրված մի քանի արձանագրություններ, որոնք քիչ նյութ են տալիս հին շրջանի ուղղագրության մասին պատկերացում կազմելու համար, քանի որ թվով քիչ և ծավալով էլ փոքր գրություններ են, հաճախ ջնջված և թերի՝ քարը կոտրված լինելու պատճառով: Հինգից մինչև իններորդ դարի վերջերն ընկած շրջանում գրված երկերը մեզ հասել են ուշ շրջանի ընդօրինակություններով: Եթե հաշվի առնենք, որ գրերի գյուտը եղել է V դարի առաջին և երկրորդ տասնամյակների միջև, ուրեմն հայերեն հրականությունն սկսվել է 410-ական թթ.: Այս ժամանակից մինչև մեզ հասած հնագույն ձեռագիր վկայությունը՝ 887 թ., լինում է մոտավորապես 470 տարի: Գրավոր դպրության հնագույն այս ժամանակաշրջանի ուղղագրության մասին մենք քիչ բան գիտենք: Հիշյալ հնագույն ձեռագիրը և X դարից հասած ձեռագրերը, որոնք սակավաթիվ են, ցույց են տալիս, որ դրանց ուղղագրությունը զգալի չափով տարբերվում է ուշ շրջանի և միջնադարյան ուղղագրությունից: Եթե մի կողմ թողնենք ընդունված ուղղագրական կանոններից կատարված պատահական շեղումները և հաշվի առնենք միայն օրինաչափական ու կանոնականը, ապա կարելի է նշել առնվազն հետևյալ ուղղագրական տարբերությունները, որ կան հնագույն IX—X դդ. և ուշ շրջանի ձեռագրերի միջև:

1. Հնագույն IX—X դդ. ձեռագրերում չկա օ տառը: Ուշ շրջանում փակ վանկում գրվող օ-ի փոխարեն հնում ամենուրեք դրվել է ա երկբարբառը՝ ալգուտ, ալւ, աղալթֆ, կալալտ և այլն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ XI—XII դդ. էլ միայն հատուկներ օրինակներ կան օ-ով:

2. Հնագույն ձեռագրերում շատ սահմանափակ է է տառի գործածությունը: Շատ բառեր ու բառաձևեր, որոնք ուշ շրջանում գրվում են է-ով, հնում գրվել են ե-ով: Այսպես են, օրինակ, ե և ի լծորդության բայերի սահմ. անց. անկատարի ձևերը, բացի եզակի 3-րդ դեմքից՝ նստեի, ուսուցանեի, շինեի, գիտեի, եին, եի, եի, խորհեին, ասեին և այլն: Այսպես են նաև թե, եթե շաղկապները և նրանցից կազմված թեպետ, միթե բառերը: Այսպես նաև այլ բառեր՝ որպես, այնպես, եղեց, ապաքեց, պատուե, (գ)եց, ի նազաբեթե, Մատթեոս, Բարթողոմեոս, Լեբեոս, Քաղեոս և այլն (բոլոր օրինակները բերված են 887 թ. գրված Ավետարանից):

Մենք ձեռագրագետների վկայություններ ունենք այն մասին, որ որոշ հին ձեռագրերում առհասարակ բացակայում է է տառի գործածությունը՝ նա ե (=է), դուլ եֆ (=էֆ), այնպես (=այնպէս), Քրիստոսե (=Քրիստոսէ), ալֆաե (=ալֆայէ), գուցե (=գուցէ), ի գեպչե (=ի գեղչէ) և այլն: «Շատ հազվագյուտ դեպքերում, երևի գրչի անուշադրությունից, եթե ներս է սպըրդում մի ձեռագրում որևէ բառի մեջ «է» տառը, այդ դեպքում մյուս ձեռագիրն, անշուշտ, պահած է ունենում նախնականը, նույն բառի մեջ ունենալով «ե» տառը»¹⁶:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Գ. Տեղ-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1979, էջ 312—313. Խոսքը XII դարում գրված երկու ձառնետրի մասին է:

3. Շատ բառերի փակ վանկի իւ երկբարբառը, որ այժմ ընդունված է տպագրությունների մէջ, գալիս է միջին շրջանից, հնում դրա փոխարեն եղել է եւ երկբարբառու Այսպես են՝ ալետ, աղբետ, աղաետ կամ եղաետ (=եա-նի6), առետ, առետ, բետ. գետ, եղետ, երկետ, ետ, թետ, եառետ, եետ, մետ և այլն:

4. Շատ բառեր, որոնք ուշ շրջանում և այժմ գրվում են լ-ով, հնագույն շրջանում դ-ով են գրվել: Օրինակ, այդ, այդք, այդգ (=այլ, այլք, այլգ), ալդակերայեցալ (=ալլակերայեցալ) բռյդ ամուր (=բռլլ ամուր), Խառայեղի (=Խառայի), Պաղիղեացաց (=Պալիլեացաց), գայդ, գայդաց (=գալլ, գալլաց) (բոլոր օրինակները բերված են 887 թ. ձեռագրից):

Մաշտոցյան ուղղագրության անունից խոսողները պետք է պահանջեն 1922 թ. փոխված ուղղագրական կետերից բացի վերականգնել նաև այս հնա-դույն ուղղագրական կետերը: Բայց նրանք այդ չեն պահանջում: Նույնիսկ վերոհիշյալ կետերից 2-րդը՝ հնագույն ե-ով դրությունը, որ ընդունված է նաև այժմ, նրանք ուզում են փոխել ուշ շրջանի միջնադարյան է-ով գրության: Բայց նույնիսկ եթե վերականգնվեն գրության վերոհիշյալ հնագույն ձե-րը, դրանք չէին լինի 1500 տարվա, որովհետև գործածվել են մինչև XII—XIII դդ., որից հետո փոխվել են: Աշխարհաբարի հին ուղղագրությունը, ինչ-պես նշվեց վերը, չի կարող կոչվել «1500 տարվա, մաշտոցյան, դասական» նաև այն պատճառով, որ նրա մեջ շատ բաներ ոչ միայն հնագույն՝ Մաշտոցին ավելի մոտ շրջանի դրության ձևեր չեն, այլ նույնիսկ գրաբարի դրու-թյան ձևեր չեն (տե՛ս վերևում):

Սա. Մալխասյանը թեև 1922 թ. ուղղագրական ռեֆորմի մի զգալի մասի հակառակորդն էր, բայց ռեֆորմից տարիներ առաջ՝ 1910 թ. խոսելով օ և իւ դրությունների փոխարեն հնագույն ձեռագրերի մեջ ալ և եւ երկբարբառների դործածության մասին, գրում է. «Այս և սրանց նման օրինակները ցույց են տալիս, թե մեր նախնիք չեն հրաժարվել ուղղագրության մեջ ռեֆորմներ մտցնելուց՝ անսովորության առաջ վարանելով: Կարիքը, հեշտությունը, պար-դույթությունը նրանց առաջնորդել են՝ գրության մեջ այս կամ այն նորությունը մտցնելու, թեպետ իրանք էլ անշուշտ զգում էին նորության անսովորությունը կամ հարձակումների ենթարկվում հակառակորդների կողմից: Եվ մենք այսօր անաշխատ, հանգիստ սրտով վալելում ենք նրանց աշխատանքի պտուղը, օգտվում նրանց մտքած ռեֆորմներից: Արդ մի՞թե մեր լեզվի մեջ ուղղա-գրական ռեֆորմներ մտցնելու իրավունքը միայն հին սերունդներին էր տրե-ված: Մի՞թե մենք այժմ զրկված ենք՝ մեր լեզուն մեր կարիքներին հարմա-րեցնելու իրավունքից»¹⁷:

Այսպիսով պարզ է, որ իրականությանը չի համապատասխանում այն պնդումը, թե իբր մինչև 1922 թ. մեր ուղղագրությունը եղել է «1500 տարվա, մաշտոցյան, դասական», իսկ այդ թվականին ավանդույթը խախտվել է: Հնի կողմնակիցներն աշխարհաբարի հին ուղղագրությունն ալդպես են որակում ոչ թե նրա համար, որ իրոք ալդպես է, այլ որպեսզի իրենց ասածը տպավո-րիչ լինի և ավելի մեծ արձագանք տա:

Ուղղադրական փոփոխությունները դանդաղ՝ ուշ-ուշ են կատարվում, որովհետև ուղղագրությունն ավելի պահպանողական է, քան կենդանի լե-զուն: Գրությունը հնում էլ փոխվել է, երբ բառի տվյալ հնչյունի կամ հնչյուն-ների փոփոխությունը կայունացել է մի որոշ տեղում՝ դրական լեզվի մայր բարբառում: Փոփոխություններ կատարվել են թե՛ գրաբարում, թե՛ միջին հայերենում, թե՛ աշխարհաբարում: Ահա սա է մեր լեզվի ուղղագրական ավանդույթը: Եթե սրան զուգահեռ նաև Մաշտոցի ստեղծած ուղղագրության հնչյունալուսն սկզբունքը՝ ամեն հնչյուն միայն մեկ տառով գրելը և ամեն տառի միայն մեկ հնչյուն ունենալը, ապա պարզ կդառնա, որ 1922 թ. ուղ-ղագրության բարեփոխությունը եղել է մեր ավանդույթի շարունակվող իրա-գործումը և մաշտոցյան սկզբունքի վերահաստատումը: Հիմա ո՞րն է ճիշտ,

¹⁷ Սա. Մալխասյան. Մի հնչյունին մի գիր. Թիֆլիս, 1910. էջ 28—29:

ուղղագրության մեջ սկզբնապես հաստատված հնչյունական սկզբունքի և հայերենի պատմության ընթացքում առաջացած ավանդույթի սգին ու բովանդակությունը պահելը՝ ուղղագրական բարեփոխություն կատարելով՝ ԽԵՆ՝ այդ բառերի մի մասի ավանդական գրության արտաքին ձևն ու առարկան պահելը՝ հրաժարվելով ուղղագրական բարեփոխություններից:

Եթե հայերենի ուղղագրությունը հետևած չէին կենդանի լեզվի փոփոխություններին, մենք ոչ մի գաղափար չէինք ունենա մեր լեզվի դարգացման (փոփոխությունների) մասին, չէինք իմանա, որ մեր լեզուն բնականորեն սկզբնական շրջանից՝ V դարից սկսած երեք մեծ շրջաններ է ունեցել՝ հին, միջին և նոր հայերեններ, չհաշված բազմաթիվ բարբառները: Եթե միջին դարերում էլ քարացած կերպով հետևեին V դարի լեզվական ձևերին, չէին գրի պացխում, այնել, աքցի, իգի, և այլն, և մենք չէինք իմանա, որ այդպիսի հնչյունական ձև են ստացել V դարի պատասխանի, տոնել, ալացի, այգի բառերը, գաղափար չէինք ունենա առհասարակ մեր լեզվի զարգացման՝ անցած ճանապարհի մասին: V դարի ձևերի հետ միասին ու շրջանում դրությամբ փոխված այդ տեսակի բառերն ու բառաձևերն են կաղմում հայոց լեզվի հարստությունը: Լեզուն անկախ մեր կամքից շարունակ փոխվում է, ինչպես՝ կարելի է սպասել, որ ուղղագրությունը քարացած մնա մի կետի վրա: Անշարժության մատնված այդպիսի ուղղագրությունը չի արտահայտի այն, ինչ պարտավոր է արտահայտել կենդանի լեզուն:

Ժիշտ չէ նաև այն մոտեցումը, ըստ որի հին ուղղագրությունը մերժում են սոսկ գործնական դժվարությունները պատճառ բերելով, ասելով՝ թե հին ուղղագրությունը սովորեցնել չեն կարող ուսուցիչները, որոնք չգիտեն՝ կամ լավ չգիտեն այն: Խնդիրն այդ չէ, այլ այն, որ հին ուղղագրությամբ սովորողները մի քանի անգամ ավելի շատ ժամանակ են վատնում գրագիտություն ձեռք բերելու համար, քան նորով սովորողները: Եվ սովորողներին այդ «անպետք և ապարդյուն ժամապաճառությունից և աշխատանքից ազատելու նպատակով» է մտցված նոր ուղղագրությունը, ինչպես նշված է ուղղագրության դեկրետի սկզբում, որ և նշվեց վերևում (տես Մ. Աբեղյանից բաղված մեջբերման մեջ): Ումանք էլ ասում են, թե շատ տասնամյակների ընթացքում նոր ուղղագրությամբ հրատարակված հսկայական գրականությունն իբր դժվար օգտագործելի կդառնա հին վերադառնալու դեպքում: Սրանք կողմնակի և երկրորդական հարցեր են: Հին ուղղագրությունն անընդունելի է առաջին հերթին այն պատճառով, որ նոր ուղղագրությունն ավելի է համապատասխանում ժամանակակից հայերենին, քան հինը¹⁸: 1922 թ. ուղղագրության ռեֆորմը եղել է լեզվաբանական տեսակետից ճիշտ ուղղությամբ: Այդ ռեֆորմով լեզվի բնական ճանապարհով փոխված հնչյուններին համապատասխանեցվել են գրության ձևերը: Ոչնչացնել այդ համապատասխանությունը՝ վերադառնալով հին, կնշանակեք անբնական և անիմաստ քայլ կատարել, նոր ուղղագրություն մտցնելը համարում են «բռնադատում», բայց իսկական բռնադատումն այն է, որ նոր լեզվին ուզում են հագցնել նրան չհամապատասխանող հին զգեստները: Իրոք, ինչպես գրել եմ, հին ուղղագրությանը վերադառնալը նման կլինի այն բանին, որ տարիքն առած մարդուն զոռով հագցնեն իր մանկական շորերը, որոնք վաղուց նրա հագով չեն: Հին ուղղագրությունը լավ է եղել հին լեզվի համար, բայց ժամանակի ընթացքում շատ բառերի մեջ առանձին հնչյուններ փոխվել են, և դրան համապատասխան էլ կատարվել է ուղղագրական փոփոխությունը. որը համապատասխանում է նոր լեզվին: Սա է հարցի էությունը:

18 1922 թ. բարեփոխությամբ հաստատված նոր ուղղագրությունը մասնակի փոփոխության է ենթարկվել 1940 թ.: Ըստ այդ փոփոխության վերականգնվել են 1922-ին հանված է և օ տառերը և որոշ թվով բառերի գրության հին ձևերը: Բայց 1922 թ. բարեփոխությամբ մտցված կանոնների մեծագույն մասը գործում է նաև այժմ: Նոր ուղղագրություն ասելով այստեղ ի նկատի է առնված այժմ Հայաստանում գործող ուղղագրությունը:

4. Բառերի արմատները

Հին ուղղագրության առավելությունը հաստատելու համար հրապարակ ծն հանում մի դրույթ, որը վաղուց մերժված է լեզվաբանների կողմից, բայց որը կարող է մոլորեցնել անտեղյակներին: Ուղում են ցույց տալ, որ հին ուղղագրությամբ երևում է բառերի կազմությունը, նրանց բաղադրիչ մասերի սկզբնական ձևը, որը չի երևում նույն բառերը նոր ուղղագրությամբ գրելու դեպքում: «Ավանգարդի» նույն համարում գրված է. «Հայ դասական ուղղագրությունն իր մեջ ունի մեր լեզվի դարավոր պատմությունը, հայ ժողովրդի մտածելակերպը, նաև մշակութային լրջություն, պատկառազու համակարգ: Այսօր մենք գրում ենք հանկարծ, հոտնկայս, հանցանք, հավելում, հուր բառ-արմատները, մինչդեռ առկա են ան ածանցը (և կարծ արմատը), ինչպես և՛ ոտն (ոտք), անց (անցնել), ավել, ուրախ բառ-արմատները՝ յուրաքանչյուրի սկզբում յ նախդիր: Դա պարզ երևում է դասական ուղղագրության դեպքում, որտեղ և հնչյունը արտահայտվում է նաև յ-ով՝ յանկարծ, յոտնկայս, յանցանք, յաւելում, յուրախութիւն»: Այսպիսով ընթերցողը պիտի ընդունի, որ եթե «լրջությամբ, կշռով» հին ուղղագրությունը հակադրվում է նորին, ուրեմն նոր ուղղագրությունը զուրկ է գրանցից: Կան գործից անտեղյակ դյուրահավատներ, որոնց վրա հեղտությամբ ներգործում են նման պընդումները, և նրանք տարվելով հին ուղղագրության այդ կարծեցյալ առավելություններով, սկսել են, ինչպես նշվեց վերևում, բազմացնել և տարածել հին ուղղագրությամբ գրություններ և հոգվածներ մամուլում:

Հիմա ում է ուղղված վերոհիշյալ խոսքը, ում է, որ կարող է բերված բառերի մեջ հան, հոտն և այլ արմատներ ընդունել: Եթե խոսքը վերաբերում է լեզվաբանությունից հեռու կանգնած սովորական ընթերցողներին, ապա նրանց բնավ չեն հետաքրքրում բառերի արմատները և մյուս բաղադրիչները: Նրանք բառերը գրում են դպրոցում սովորած կանոններով և չեն մտածում դրանց կազմության մասին: Իսկ եթե այդպիսի մարդիկ բառերի մեջ արմատներ որոնեն, ինչու միայն նշված ենթադրյալ արմատները պիտի ընդունեն: Նրանք կարող են բառի ամեն մի մասն էլ արմատի տեղ ընդունել, անկախ դրա հին կամ նոր ուղղագրությամբ գրվելուց: Հին ուղղագրությամբ գրված յանկարծ բառի մեջ նրանք որպես արմատ կարող են ընդունել յան կամ յանկ մասը կամ ամբողջ բառը, յոտնկայս բառի մեջ՝ յոտ, յոտն, յոտնկ և այլն, նմանապես նոր ուղղագրությամբ գրվելու դեպքում հանկարծ բառի մեջ՝ հան, հանկ, հանկարծ, այդպես և մյուսների մեջ: Բառի մեջ ուզածդ մասը կարող են որպես արմատ ընդունել: Իսկ եթե խոսքը վերաբերում է լեզվի հարցներով, բառերի կազմությամբ զբաղվող մարդկանց, ապա նրանք գիտեն, որ կա հայերենի հին և նոր ուղղագրություն, գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար, և բառերը հին ձևով գրվեն թե նոր, նրանք կարող են վերլուծել իրենց բաղադրիչներին և գտնել համապատասխան բառարանների օգնությամբ:

Վերոհիշյալ և այդ տիպի բառերի մասին ասվածը խաբուսիկ դրույթ է՝ հանկարծ, հոտնկայս գրելով մենք այժմ իբր թե մեղանշում ենք բառերի կազմությունն անաղարտ պահելու դեմ: Բայց տեսներ, ՚ դարի մատենագիրները գրել են սփռել, սթափ, սթափել, որոնց մեջ զ նախդիրը գրել են ս տառով, րնկեւ, րնկողմանել, րմբունել և այլն, որոնց մեջ րնկ նախդիրը գրել են ըն, րմբ ձևով, ստանձնել, որի մեջ ըստ նախդիրը գրել են ստ ձևով: Ի՞նչ «անլրջություն» հին մատենագիրների կողմից, խաթարել են նախդիրների գրությունը: Այս նախդիրները կարելի է այլևայլ ձևերով գրել, իսկ յ նախդիրը չի կարելի, դա առանձնահատուկ տեսակի նախդիր է, թեև գրաբարում բաղաձայնից առաջ գրվում է ի տառով՝ ի տանէ, բայց յազգէ: Կարելի է նաև որոշ բառեր յ նախդիրով և առանց դրա գրել՝ յանկարծ-անկարծ, յաջող-աջող և այլն: Կարելի է նաև բառասկզբի արմատական յ-ն շփոթել յ(ի) նախդրի

հետ և բաց թողնել, ինչպես՝ «երթիցես յարկս քո» (փոխանակ՝ ի յարկս), «հասնալք յատակս մուրուքեան» (փոխանակ՝ ի յատակս) և այլն¹⁹,

Վերևում նշվեց, որ աշխարհարարի XIX դարի ուղղագրությունը շատ դժգոհությամբ տարբերվում է գրաբարի ուղղագրությունից թե՛ արմատական բառերի և թե՛ քերականական ձևերի գրությամբ: Օրինակ, ասեղ, ցուրեն և այլն, քերականական ձևերից՝ գնանք, գնար և այլն ծագում են ասեղն, ցուրեան, գնամք, գնայր ձևերից, այսինքն, աշխարհարարի գրության մեջ չեն պահպանված այն ձևերը, որից նրանք առաջացել են: Գրության այս ձևերը նույնպես լրջություն չունեն:

XIX դարում աշխարհարար գրողները բայերի ենթադրական եղանակի ժխտական գրում էին չեմ գնալ, չես գնալ, չի գնալ և այլն, այդպես գրում էին շատերը նաև XX դարի առաջին տասնամյակներում: Բայց արդեն XIX դարի վերջերից դրանց դերբայական լ վերջն ընկնում է, և այդ բայաձևերն սկսում են գրել յ-ով՝ չեմ գնայ, չեմ մոռանայ և այլն: Ինչու՞ համար: Չէ՞ որ անորոշ դերբայի լ հնչյունն ընկել է, և ոչ թե փոխվել յ-ի: Յ-ով գրության այդ ձևը, որ չկա գրաբարում, այլ աշխարհարարում է առաջացել, չի համապատասխանում այդ բայաձևի ո՛չ արտասանությանը, ո՛չ էլ ստուգաբանությանը՝ շփոթում է այն նույնաձև գնայ, մոռանայ ըղձականի հետ, մինչդեռ ծագման տեսակետից ոչ մի կապ չունի նրա հետ: Գրության այս ձևը, որ 1922 թ. առաջ է եղել, նույնպե՛ս «պատկառազդու» է:

Բայց նորից մի փոքր ետ գնանք: Միջին դարերում, միջին հայերեն գրավածքներում գրել են ծառութիւն (Սմբատ Սպարապետ, XIII դար), որ նշանակում է ծառայություն: Այս ծառութիւն բառի -ութիւն մասը ածանց է, մնացած ծառ մասը ծառ բառ-արմատը կհիշեցնի, թե՛ ծառայ արմատը: Դարձյալ միջին դարերում գրում էին համել, որ նշանակում է հրամայել: Եթե հանենք անորոշ դերբայի -ել մասնիկը, կմնա համ, սրանից ինչպե՛ս գլխի ընկնենք, որ դա հրաման բառից է: Գրում էին հաւելք, որ նշանակում է հրավելք (հին հրաւելք), -ելք վերջամասնիկը հանենք, կմնա հաւ, սա չի՞ շփոթվի հաւ (=թռչուն) արմատ-բառի հետ: Գրել են պուման, որ նշանակում է պայման, դրել են պացխուն առանց ուղադրություն դարձնելու դրա հին և դասական պատասխանի ձևի վրա: Նույն բառը V դարում գրել են այդպես՝ պատասխանի, դարձյալ առանց հաշվի առնելու դրա սկզբնական պահլավական ձևը, որ է՝ pal-saxuan: Եթե միջին դարերում այդպես չգրեին, այլ «լուրջ» ու «պատկառազդու» լինելով գրեին հին գրաբարյան ձևերով, մենք այժմ՝ ուղիղ չէինք իմանա միջին հայերենի հարյուրավոր բառերի ու բառաձևերի մասին:

Ավելի ետ գնանք՝ դեպի V դար: Երբ Մաշտոցը և իր գործակիցները գրում էին մայր, հայր, հաց, ջուր, տուն, քաղաք, բժիշկ և այլն, ինչպես մենք էլ հիմա գրում ենք, նրանք պահպանո՞ւմ էին այդ բառերի հնագույն ձևերը, այն ձևերը, որից առաջացել են դրանք: V դարում ոչ միայն նպատակ չեն ունեցել պահպանելու բառերի հնագույն արմատական ձևերը, այլ դրա մասին չեն էլ մտածել և գրել են այնպես, ինչպես արտասանել են իրենք և իրենց շրջապատի մարդիկ: Եթե նրանք մտածեին այդ մասին, ապա բառերն այդպես չէին գրի, այլ կգրեին դրանց սկզբնական արմատական ձևով, որից առաջացել են: Բժիշկ բառը պիտի գրեին բիգիշկ ձևով, որովհետև այն փոխառություն է պարսկերեն bizisk բառից, որն իր հերթին ծագում է զենդերեն bis (—դեղ) բառից: Բերենք ևս մեկ օրինակ. մայր բառը ծագում է հնդեվրոպական նախալեզվի māter ձևից, բայց V դարում գրել են մայր, առանց ուղադրանելու դրա արմատական հին ձևի վրա: Մի փոքր շուտ գանք և նայենք մեր շրջակա ազգերին: Նույն բառը ռուսերեն գրում են мать, հին գերմաներենում գրում են muoter, նոր գերմաներենում Mutter, անգլոսաքսոներեն՝

19. Ա. Բագրատյանի. Հայերեն քերականութիւն ի պէտս դարգացելոց. Վենետիկ, 1852, էջ 426:

modor, անգլերեն mother և այլն (օրինակները բերվում են Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանից»): Այս օրինակներից ոչ մեկն էլ չի արտահայտում բառի հնդեվրոպական արմատի հին հնչյունական ձևը, այլ գրել են և գրում են այնպես, ինչպես ընդունված է տվյալ լեզվում:

Ո՞րք են տանում մեզ բառերի արմատները: Դրանք մեզ տանում են շատ հեռավոր դարեր: Բայց բառերը փոխվել են հնչյուններով, շատ արմատներ՝ անճանաչելի կերպով: Եթե Մաշտոցը և իր ընկերները հետևեին բառերի արմատների հնագույն ձևերին, բնավ չէին կարող հայերեն բառերը գրել և ուղղագրություն հաստատել, որովհետև բառերի հնագույն ձևերն անհետացել են, շատ արմատների մասին մենք գիտենք լեզվաբանների հետազոտությունների շնորհիվ միայն, իսկ շատերի մասին առհասարակ ոչինչ չգիտենք: V դարում էլ նույնն է եղել: Եթե այդպես չլինեք, բառերը հնչյուններով փոխված չլինեին, այժմ Հնդկաստանից մինչև Անգլիա և Ամերիկա բոլոր հնդեվրոպական ժողովուրդները միևնույն ձևով կգրեին:

«Մշակութային լրջության» կապակցությամբ մի ուրիշ բան էլ է ասվում. «Դասական ուղղագրությամբ ունենք սէր և սրանից ծնվածները՝ սիրելի, սիրալիրաւ, սիրաճաւ և այլն, երբ է-ն օրինաշարիորեն ի-ի է փոխվում, նաև սեր ու սրանից ծնված՝ սերուցք, սերախաւոն, սերոտ, երբ ե-ն մնում է: Սա իրոք, դասական կարգ է, հնից եկող տրամաբանություն»²⁰:

Նորից պետք է հտ դառնանք և տեսնենք, թե ինչպես են V դարի մատենագիրները հետևել այս «հնից եկող տրամաբանությանը»: Նրանք գրել են՝ այր (=տղամարդ, սեռական՝ առն), և այր (=քարայր, սեռական՝ այրի), մայր (=ծնող, սեռ. մար, ուշ շրջանում՝ մօր) և մայր (=մայր ծառը, սեռ. մայր), կոյս (=կողմ, սեռ կուսի, կուսից), և կոյս (=աղջիկ, սեռ. կուսի, կուսաց), սաւն (=կաթսա, սեռ. սանի) և սաւն (=սանիկ, սեռ. սանու) և այլն և այլն: Հիմա թող հնի կողմնակիցները հարց տան, թե ինչպես են համարձակվել V դարի մատենագիրները «տրամաբանություն» չունենալ և նույնահնչուն տարբեր բառերը՝ համանունները գրել նույն ձևով:

Լուրջ բան չէ հազարավոր բառերից ընտրել մի քանիսը և դրանց վրա հիմնել մի դրույթ, առանց հաշվի առնելու, որ ուրիշ ավելի շատ փաստեր այդ դրույթին հակառակ են խոսում: «Մշակութային լրջություն», «պատկառազորու համակարգ», «կշիռ» բառերով նետված խաթը, որի նպատակն է հին ուղղագրության առավելությունը ցույց տալ, ոչ մի արժեք չունի: Ուղղագրության մեջ բառերի նախնական արմատների ու մյուս բաղադրիչների ձևը պահեն անհնար է, դրանով չեն առաջնորդվել ո՛չ V դարում, ո՛չ միջին դարերում, ո՛չ էլ XIX դարում:

5. Մի փանի այլ փաստեր և հորինվածքներ

1. «Ավանգարդի» նույն հոգվածում գրված է, թե 1922 թ. ուղղագրության ռեֆորմի օգտին «ըստ տեղեկությունների, քվեարկողների մեջ եղել է մի ուս գործիչ (Մոսկվայից նոր ժամանած արտակարգ կոմիսարը), որը հայերեն բոլորովին չի իմացել: Այդ պայմաններում Մակինցյանի ներկայացրած արեղյանական ուղղագրությունն ընդունվել է մեկ ձայնի մեծամասնությամբ»: «Հստ տեղեկությունների» ասածը Փարիզում լույս տեսնող «Խթան» շաբաթաթերթի 1968 թ. մայիսի 16-ի համարում հրատարակված՝ գործից անտեղյակ մի մարդու՝ Եր. Հարությունյանի մի հոդվածն է: Այս հեղինակը հիմնվել է Իսուբեն Աբրահամյանի՝ իբր թե իրեն պատմածի վրա: Հոդվածագիրն այնքան անտեղյակ է գործին, որ ռեֆորմի նախագծի հեղինակ չի համարում Մ. Աբեղյանին, նշում է, թե իբր նախագիծը Ժողկոմխորհի հաստատման ներկայացրել է Ա. Հովհաննիսյանը, թե իբր այն ժամանակ լուսավորության ժող. կոմիսար եղել է Լ. Մուսվաթյանը և այլն²¹:

²⁰ «Ավանգարդ», 1989, № 84.

²¹ Տե՛ս Ս. Գյուլբուրգյան. նշվ. աշխ., էջ 348—349.

Հայաստանի Ժողովրդապետների 1922 թ. մարտի 4-ի նիստի արձանագրության մեջ կան այն մարդկանց անունները, որոնք մասնակցել են այդ նիստին և քվեարկությամբ հաստատել ուղղագրության ռեֆորմը: Ահա նրանց անունները. «Նախագահ՝ Մյասնիկյան, ընկերներ՝ Մակինցյան, Շահվերդյան, Ավիս, Մուսվյան, Մարգարյան, Երզնկյան, Ղարազյոզյան, Իվանյան, Կոստանյան և քարտուղար՝ Դ. Տեր-Սիմոնյան»²²: Ո՞րն է սրանց մեջ հայերեն բոլորովին չիմացող ուսուցիչը: Արձանագրության մեջ չեն նշված ո՛չ թեև և ո՛չ էլ դեմ քվեարկողների անունները, և չգիտենք, թե դեմ քվեարկողներ եղե՞լ են, թե ոչ: Այնտեղ միայն գրված է, որ լսել և ընդունել են «Լուսժողովի ներկայացրած դեկրետի նախագիծը նոր ուղղագրություն մուծելու մասին»: Ուրիշ ոչինչ: Այնպես որ «հայերեն բոլորովին չիմացող ուսուցիչ» և «մեկ ձայնի մեծամասնությունը» հորինվածքներ են, որ վկայակոչված են տպավորություն թողնելու համար:

2. Ուղղագրական բարեփոխության անընդունելի լինելը ցույց տալու համար բերում են մի քանի օտար լեզուների օրինակը, որոնք դժվար ուղղագրություն ունեն, ինչպես, անգլերենը, ֆրանսերենը և այլն, և որոնցում իբր թե ուղղագրական բարեփոխություն չի կատարվել: Այս պնդումը ճիշտ չէ: Բայց ես մի կողմ եմ թողնում այս լեզուների օրինակը՝ նշելով միայն հետևյալը: Բոլորովին տեղին չէ հայերենի համար օրինակ դարձնել այնպիսի լեզուներ, որոնք սեփական միայն իրենց համար ստեղծված այբուբենն ունեն, այլ լատիներենի 25 տառանոց խիստ անկատար այբուբենն են մի կերպ հարմարեցրել այդ տառերից շատ ավելի հնչյուններ ունեցող իրենց լեզուներին: Հիշյալ լեզուների շարքում դրվում է նաև ուսերենը. «Մասնավորապես, 1955 թ. ուս մտավորականությունը միահամուռ կերպով մերժեց ականավոր լեզվաբանների մի ամբողջ հանձնաժողովի մշակած ուղղագրական «հեշտացնող» փոփոխությունները»²³: Այս օրինակը բերված է նրա համար, որ ընթերցողը դրանից եզրակացնի, որ ուսերենի ուղղագրության մեջ առհասարակ ռեֆորմ չի եղել, ուստի հայերենի համար էլ անտեղի է եղել 1922 թ. ռեֆորմը: Բայց ընթերցողը բերված օրինակից ինչպե՞ս եզրակացնի այդպիսի բան: Ուղղագրական առաջարկություններ շատ են եղել թե՛ ուսերենի և թե՛ հայերենի համար, և եթե մի տարի դրանց հիման վրա ռեֆորմ չի եղել, այդ նշանակում է, թե ուրիշ տարիներին էլ չի եղել: Վերևում բերվածը, ինչպես ներևում է, նախատեսված է նրանց համար, ովքեր այդպիսի հարցեր չեն տալիս: 1955 թ. է հրապարակ հանված, որպեսզի խոսք չլինի 1917—18 թ. ուսերենի ուղղագրական մեծ ռեֆորմի մասին, որն ընդհանուր գծերով համապատասխան է հայերենի 1922 թ. ռեֆորմին: Այդ ռեֆորմով ուսերենի այբուբենից հանվել են երեք տառեր, որոնցից յուրաքանչյուրն ունեցել է իր զուգահեռ նույնահնչուն տառը, փոխվել են զգալի թվով բառերի գրության ձևերը: Այն հանգամանքը, որ իշխանյանն այս մասին ոչինչ չի ասում, դրանով այդ ռեֆորմը մեղմեցնող չի վերանում: Նա պարզապես հաստատել է, որ կան իր դրույթին հակասող փաստեր, և 1955 թ. ցույց տալը այդ փաստերից խուսափելու միջոց է:

3. Այն, ինչ ասվեց վերևում, ցույց է տալիս, որ հին ուղղագրությանը վերադառնալու պահանջի հիմնավորման համար լեզվական փաստարկներ չկան, և այդպիսիք չեն էլ բերում: Իսկ այն, ինչ գտնում և բերում են, ուղղագրության բուն էությունը շոշափող կողմնակի միջոցներ են: Միջոցներից մեկն էլ, որ գտել է իշխանյանը, այն է, որ զանազան տեղերից հավաքել է մի քանի անվանի գրողների և մշակութային գործիչների ասած ու չասած վարկաբեկիչ արտահայտություններ նոր ուղղագրության և Մ. Աբեղյանի հասցեին և ամեն անգամ իր նորանոր հոդվածներում կրկնում է դրանք, վախենալով՝ չլինի թե կորչեն: Որքա՞ն խախտու պետք է լինեն հին ուղղագրու-

²² ՀնՍՀ Հոկտ. հեղափոխ. և սոց. շինարարության պետական կենտր. արխիվ, ֆ. № 113, թ. 5, գ. 3, թ. 25:

²³ Մեկնագրող, 1989, № 84:

թյանը վերադառնալու հիմունքներն ու հեռանկարները, որ մարդ այդպիսի արտահայտություններ իրեն օգնության կանչի: Թե ինչ արժեն դրանք, արդեն ցույց է տրված²⁴: Մնում է ավելացնել հետևյալը: Ինքնին այդ վարկաբեկիչ արտահայտությունները չեն կարող բարձրացնել հին ուղղագրության արժեքը, բայց դրանք հավաքված են հետևյալ հաշվարկով. ընթերցողների մեջ կատնվեն գործից անտեղյակ մարդիկ, որոնք կարդալով դրանք՝ կասեն. տեսե՛ք, թե ինչ են ասել անվանի գրողները նոր ուղղագրության և Մ. Աբեղյանի հասցեին, ուրեմն կորչի նոր ուղղագրությունը: Բայց այս հաշվարկի հաջողությունը միայն ժամանակավոր կարող է լինել, այնքան ժամանակ, քանի դեռ «կորչի» ասողները չեն ծանոթացել հին ուղղագրությանը:

Այս հոգվածը 1989 թ. վերջերին հանձնված էր հրատարակության, երբ «Խորհրդային մանկավարժ» ամսագրի 1990 թ. 1-ին համարում կարդացի Ռ. Իշխանյանի մի նոր հոգվածը ուղղագրության մասին: Այստեղ 67-րդ էջում գրված է. «Ինչպես հայտնի է, Մ. Աբեղյանին Սիբիր աքսորելու սպառնալիքի տակ են ստիպել (խոսքը վերաբերում է 1921 թ.—Պ. Շ.) ներկայացնելու դասական ուղղագրությունն արմատապես խախտող նախագծի տարբերակը»:²⁵ «Ինչպես հայտնի է», իսկ որտեղից և ո՞ւմ է հայտնի, որտե՞ղ են փաստերը. արդյո՞ք հոգվածագիրը կարող է բերել գրավոր կամ բանավոր թեկուզ մի վկայություն իր այդ շինծու մտքի օգտին: Այս մասին նա լուր է, երեկ մտածելով, որ ընթերցողները պարտավոր են հավատալ իր գրած ամեն մի խոսքին: «Ինչպես հայտնի» բոլորովին անհայտ է ու հնարովի: Աբեղյանին վերաբերող ոչ մի աղբյուրում այդպիսի ոչ մի փաստ չկա: Ընդհակառակն, Աբեղյանն ինքն է դժգոհում ռեֆորմի ձգձգվելու համար՝ գրելով: «Մի տարի է անցել այդ խնդիրը կոմիսարիատում հարուցվելուց ի վեր, բայց ղործնական քայլեր չեն արված»:²⁶ Ինչպե՞ս կարող էր սպառնալիքի տակ առաջարկված նախագիծն այդքան խորապես հիմնավորված լինել, մի բան, որ տեսանք վերևում, դա ընդունել է նաև Երևանի համալսարանի դասախոսներից կազմված հանձնաժողովը²⁷, 1922 թ. 4. Պոլսում նստած հմուտ լեզվաբան Ա. Խաչատրյանը հիմնավորված և ընդունելի էր համարում ռեֆորմով հաստատված ուղղագրության կետերի մեծագույն մասը²⁸, Թուրքիայում նրան ո՞վ էր Սիբիրով սպառնում, Ս. Մալխասյանը Թիֆլիսի մամուլում բացեիքաց քննադատեց ռեֆորմը, ինչո՞ւ նրան Սիբիր չաքսորեցին: Հոգվածագիրը Սիբիրը նույնպես հորինել է, ինչպես վերոհիշյալները՝ նպատակ ունենալով մի կողմից բորբոքել հարցի մեջ շխորացող մարդկանց երեակայությունը և հակադրեցությունը նոր ուղղագրության դեմ, մյուս կողմից Աբեղյանին մեղադրել մի նոր հանցանքի մեջ՝ տեսե՛ք, անձը Սիբիրից ազատելու համար է ռեֆորմի նախագիծ ներկայացրել: Եվ սա ասված է մի մարդու մասին, որը գիտության հարցերում երբեք չի նահանջել իր սկզբունքներից: Ամենածանր տարիներին անգամ, ինչպես, օրինակ, 1930-ական թթ., երբ Աբեղյանին մեղադրում էին «իդեալիզմի», «ֆորմալիզմի», «նացիոնալիզմի» և ուրիշ «իդեալիզմի» մեջ, նա համարձակորեն, առանց որևէ բանից երկյուղելու, հրապարակավ պաշտպանել է իր սկզբունքները, մերկացրել է իր քննադատների հերյուրանքները և այն անազնիվ մեթոդները, որոնցով տգիտությունը կռվում է գիտության դեմ²⁸, վերջում ուզում եմ ավելացնել, որ հին ուղղագրությանը դեմ է Հայաստանում ապրող լեզվաբանների մեծագույն մասը՝ Գ. Ջահուկյանը, է. Աղալյանը, Հ. Բարսեղյանը, Ա. Մարգարյանը և ուրիշները:

24 Տե՛ս «Ավանգարդ», 1989, № 129:

25 «Խորհրդային Հայաստան», 1922, № 35:

26 Տե՛ս նույն տեղում:

27 Տե՛ս «Տեղեկագիր... ուղղագրության և տառերի ձևի փոփոխության հանձնաժողովին»:
Երևան, 1927, էջ 34, 53—54 և այլն:

28 Տե՛ս Մ. Աբեղյան. Երկեր. Ը հատոր, էջ 193 և հտ.: